

որ ատ արուեստին ձեռք զարնելով՝ անասուն դարձեր են: Մեր առջիններուն աս բանին վրայ կը զարմանամ որ այսչափ ատեն համբերեր են ատոնց: Հռոմայու հիմնարկութեան 226 տարին, տաստիկ ժանտախտի ատեն, քաղքեցիք զբաղեցընելու համար ատ դերասաններուն հրաման տուեր են թատրոն բանալու. ժանտախտը երկու տարի միայն տևեր է. ատոնց խենթութիւնը չորս հարիւր տարի է որ կը տևէ: Գիտեմ որ հոս ըրած բողոքներն՝ հոտ ալ չի դադրին պիտոր ընելէն. բայց ես խուլ կ'ըլլամ. վասն զի գէշերէն ամբաստանուիլը արդարութեան նշան է, ինչպէս որ Ներոնին վարժապետը ըսաւ. վասն զի որչափ նախատինք է մարդու լաւերուն ըրած պարսաւը, այնչափ ալ գովութիւն է գէշերուն ըրածը: Իրաւ՝ Հռոմայու կայսերը որ այնչափ գլխած են օտարներու, պէտք չէ որ խիստ ու անգութ ըլլան իրենցներուն. բայց կենացս մէջ ասանկ փասակար բան չեմ տեսած Հռոմայու, ինչպէս խեղկատակ դերասաններուն տուած զբօսանքը: Ասկէց այլանդակ ինչ կրնայ ըլլալ որ քաղքիս իմաստունները՝ կապիտոլիոնին քովը՝ զմայլին ծիծաղելով խենթի մը խօսքերուն վրայ: Ասկէց ծանր ինչ գայլ թակղութիւն կրնայ ըլլալ որ թագաւորներուն դուռը բաց ըլլայ միշտ խենթերուն, ու գոց խեղացիներուն: Ասկէց մեծ անգլութիւն ինչ կրնայ ըլլալ որ ծերակոյտը օրուան մը մէջ աւելի տայ խենթի մը, քան թէ տարուան մը մէջ իր ծառաներուն, ու բոլոր կենացը մէջ իր ազգականներուն: Ասկէց մեծ անիրաւութիւն ինչ կրնայ ըլլալ որ կայսերութեւ սահմանազուլը եղած բերդերուն պահապանացը ու լիւրիկեցի զինուորներուն թոշակը պակսի, ու Հռոմայու խեղկատակներուն վարձքը եւելնայ: Ասկէց մեծ ինչ նախատինք կրնայ ըլլալ Հռոմայու՝ որ խեղկատակները աւելի հարստութիւն թողուն ցաթկոտելով ու երգելով, քան թէ իր քով զօրաւորները: Երբոր ատոնք երկրէ երկիր կ'երթան՝ իրենք զիրենք վտանգի

դնելով արիւննին թափելու, ու ունեցածին կը ծախեն, ատ թշուառականները տնէ՝ ի տուն կ'երթան իրենց լրբութիւնները ընելու, ու ստակ ժողովելու: Լիբեացուց Սպանիայի ծայրը պատերազմ ընելու ատեն՝ ստակնին պակսեցաւ, ու երկու դերասան իրենց ունեցածովը առաջ տարին պատերազմը տարի մը ամբողջ. անանկ որ՝ երկու խենթի հարստութեամբը յաղթուեցան այնչափ խելացիներ: Եփեսոսի ապիացուց քաղքին մէջ՝ Արտեմիայ տաճարը՝ դերասաններու ստրկովը շինուեցաւ: Օգոստոս Հռոմայու պարիսպները շինելու համար աւելի ստակ ունեցաւ Տիբերիս գետին մէջը խղճուած երկու դերասաններէն, քան թէ հասարակաց գանձարանէն: Դեռ ուրիշ շատ ատոնց նման օրինակներ կրնամ բերել: Հիմայ ինչ կ'ըսես, իմ Լամպերթոս, բախտին անիրաւութեանը. ատոնց յիշատակը կը փնայ կոր խենթ ըլլալուն համար, ուրիշներունը չիմար կոր խելացի ըլլալուն համար: Չեմ ուզեր երկընցընել. յունարէն գրեցի որ կարենաս ցուցընել թուղթս բոլոր կողմեցուցդ: Նաւերը շուտ մը ետ դարձուր, պաշար պիտոր տանին Լիւրիկէ: Խաղաղութիւն ընդ քեզ Լամպերթոս, հանդերձ առողջութեամբ. բախտը ինծի հետ հաշտ ըլլայ: Ծերակոյտը քեզի բարեւ կ'ընէ, նմանապէս փաւստինս՝ որ աղջկանդ խիստ սիրուն գօտի մը կը խրկէ կոր: Ես ալ ծիրանիներուդ փոխարէն քառամանեակ մը կը խրկեմ ազնիւ քարերէ:

Նորին ձառք, երբոր իր Մարտինա դուստրը կոռգէին տղոս մը հարսը. նկ աւնոր ծնողքը.

Շատ անգամ տեսայ ուրիշներուն վրայ, անձամբ ալ փորձեցի որ արտօրալով եղած գործքը գէշ հետևանքներ կ'ունենայ: Թէ և խոհեմ մարդ մը իր դատմամբը միայն կարենայ շատ բան ընել, բայց աղջիկը փեսի տալու հա-



մար՝ հայր մը որչափ ալ խոհեմ ըլլայ, պէտք չէ որ առանց ուրիշներուն խորհրդակցութեանը շարժի: Վասն զի նա խանձոտ խախտը թէ և ամեն բանի մէջ ձախորդութիւն մը կը խոթէ, բայց աս բանիս մէջ շատ աւելի է իր նախանձը: Ով որ աղջիկը պիտոր կարգէ, պէտք է առանձնանայ ու խորունկ մտածէ՝ իբրեւ թէ ունեցածը չունեցածը՝ անունը՝ պատիւը՝ հանգստութիւնը ու կեանքը կորսնցընելէն խալըսելու վրայ ըլլայ իր մտածութիւնը: Վասն զի աս ամեն բաները իր աղէկ կամ գէշ ընտրութենէն կը կախուին: Ամեն իմաստունները մէկ տեղ գալով՝ ապահով խորհուրդ մը չեն կրնար տալ աս բանիս վրայ, իսկ դուք կ'ուղէք որ ես միշտակ՝ որ իմաստունի մը տեղ ալ չեմ դրած՝ զի՜ չուտ մը ուրոշեմ: Անանկ բանի վրայ՝ որուն վտանգին մէջը կնիալէն ետքը ճար չիկայ, շատ հասուն ու կատարեալ որոշումը պէտք է ընել: Այն անուանի Պորկիոս Մարկոսը՝ որուն կեանքը հայելի էր, ու խրատները ամեն ատեն հոչակաւոր եղած են, յաւիտենական յիշատակի արժանի խօսք մը ունի ըսած խորհրդարանին մէջ: Ով հարք համագրեալք, ձեր հանած հրովարտակէն իմացանք որ մէկ խորհրդով իրեք բան որոշեր էք: Պարթեներուն դէմ նորէն պատերազմ բանալ, կարեւորագոյն հետ թշնամութիւնիս առաջ տանել, ու հինգ Հռոմայեցի ազնուական օրիորդ՝ հինգ ազատորդի մարտիտանացոց հարս տալ: Եր սոսկամ մտածելով որ ասանկ դժուարին բաները մէկէն որոշեր էք. իմ հայրենասիրութեան պարտքս ընելու համար՝ կ'ըսեմ որ ատ իրեք բանին վերայ պէտք է ամենուն ալ խորհուրդ հարցնել, ամեն դից ատ բաները յանձնել, ու ատ ամեն մէկ բանին վրայ զատ զատ խորհուրդ ընել: Իրաւցնէ իրեն արժանի էր աս խօսքը: Վասն զի բան մը շատ խորհուրդներով կրնայ որոշուիլ, բայց շատ բան մէկ խորհուրդով մը չիկրնար որոշուիլ: Թէ որ աս կանոնը ամեն բանի մէջ ալ ասանկ է, ևս առաւել ամուսնութեան վրայ:

Ով բարեկամք, դուք ինձի կ'ըսէք որ առաջարկած փեսանիդ շատ աղէկ տղայ է, բոլոր ժողովուրդը զինքը կը սիրէ ու կը պատուէ: Բայց ուսմիկ ժողովրդեան դատաստանը ապահով չէ, պէտք է խելացի մարդիկ դատեն, խելացիներուն մէջէն ալ խոհեմները, խոհեմներուն մէջէն ալ ընտրուած անձինք: Ռամկին գէշ ըսածը շատ անգամ աղէկ է, աղէկ ըսածը գէշ է. քանի քանի անոնցմէ ընտրուած անձինք վաւերացան խորհրդարանէն, ու ուսմիկին առջին ալ խայտառակ եղան: Ռամկին ժողովները անխելք ժողովներ են, մէկը գետնէ գետին կը զարնեն, ետքը նորէն կը բարձրացընեն. խելացիներուն ալիւրը՝ իրենց համար որոմն է, իրենց որոմ կարծածը՝ խելացիներուն համար ալիւր է: Կ'ուզէք գիտնալ որ ով է հիմայ ժողովրդեան սիրելի, մտիկ ըրէք, որուն որ դպչի՝ դպչի, ով որ վրան կ'առնէ՝ թող առնէ: Ժողովուրդը կը սիրէ զանոնք՝ որ աչք կը գոցեն գէշին, ու աղէկին դէմ են. սուտ զուրցողին կ'օգնեն, ճշմարտախօսը կ'ատեն, մարդասպաններուն ու գողերուն ջատագով են. խռովարարները կը գրկեն, խաղաղասէրը կը հալածեն: Վատահամբաւները կը գովեն, բարեհամբաւները կը պարսաւեն: Յայտնի է որ խելացիներուն կասկածելի կ'ըլլայ՝ ով որ անխելքներէ կը գովուի, վասն զի անխելքները զանոնք կը սիրեն՝ որոնք որ մոլովթիւններուն սանձը կը թողուն:

Հիմայ մեր խնդիրին գանք. դուք անանկ գովեստներ տուիք ատ տղուն վերայ որ եթէ իրաւ են, չէ թէ միայն կարգիւնաւորի իմ փեսաս ըլլալու՝ այլ նաեւ ժառանգ կայսերութեան: Թէ որ իրաւ ատ ամեն առաքինութիւնները ունի, կ'երգնում որ կու տամ իրեն իմ դուստրըս. բայց աղէկ նայեցէք, ես ամենկին ծանօթութիւն չունիմ ատ տղուն վրայ: Նմանապէս իմ աղջկանս վրայ ալ աղէկ մտածեցէք, չիկարծէք որ զարմանալի կերպով մեծցած ու կրթուած է արքունեացս մէջ: Քանինք տեսանք



քանիներ ալ կարգացեր ենք, որ երբեմն դից հրամանէն, երբեմն իրենց պատժոյ արժանի ըլլանէն, երբեմն ալ դժբախտութենէ, կարծելով որ տներնին փեսայ կը բերեն կոր՝ դժուր դարձուցին տներնին. հարս բերելու տեղ՝ օձ ներս առին, բարեկամ փնտռելով՝ թշնամի գտան: Զաւկընին կարգելով կը կարծէին որ հանգիստ պիտոր գըտնեն, տառապեալ կեանք մը ունեցան ու խեղճ մահ: Պէտք է ցաւինք ասանկներուն վրայ. բայց իրենք իրենց կ'ընեն՝ մտածելու գործը առանց մտածելու ընելով: Մի մեղադրէք զիս այսչափ դժուարութիւններ հանելու համար. վասն զի ատ տղան ինծի որդի պիտոր ըլլայ, փաւտինայիս փեսայ, աղջկանս էրիկ, կոմոդոս զաւկիս եղբայր, ծերակուտին ընկեր, ընտանեացս ազգական, ծառայիցս տէր. ուրեմն իրաւունքը կը պահանջէ որ ամենուն հաճելի ըլլայ ըրածնիս: Շատ բան հեռուանց վնասակար չէ, մօտենալու որ ըլլայ կը վնասէ. արեգակը դէպ 'ի հիւսիս բնակողներուն չի վնասեր, բայց եթովպացիներն որ իրեն մօտ են՝ կ'այրէ: Հոռոմ շատ զաւկըններ ունեցաւ՝ որոնք դրսի երկիրներ իրեն մեծ օգուտ ըրին, ու անունին բոլոր աշխարհք տաւ ընծուեցաւ. բայց երբոր տուն եկան, այնչափ անմեղներու արիւն թափելու պատճառ եղան՝ որչափ բարբարոսներու արիւն թափեր էին: Միտքերնիդ բերէք Յուլիոս Կեսարը, Պոմպէոսը, Սիլլան, Մարիոսը, Կասիոսը, Կատիլինան, Լիպիտոսը, Ոկտաւիանոսը, Մարկոս Անտոնիոսը, Կալիգուլան, Ներոնը, Ոթոնը, Դոմետիանոսը, ու ասոնց նման շատերն որ իսաւրիա մեծցուց: Հատապէս ինծի որ ամեն դուրսը տեսածնիս որ կը հաւնինք, տներնիս հրամցընելու որ ըլլանք՝ չենք հաւնիր: Ուրիշ բան է քիչ մը ատեն խօսիլ մէկուն հետ, ուրիշ բան է երկան ատեն հետը կենցաղավարիլ. դիւրին է քիչ մը ատեն ինքը զինքը բռնել ուրիշները խաբելու համար. աւելի ալ դիւրին է ուրիշէն խաբուիլը: Պարզ

դէմքով մը, անուշ զուրցուածքով, հանգարտ շարժումներով, քիչ խօսելով, կըրնայ մէկը այսօր ուրիշը խաբել, ու վաղը ինքն ալ նոյն կերպով ուրիշէն խաբուիլ: Պատիկութեանս ատեն Տաւրի նոս երեւելի ատենաբանը ճանչցայ, որ անգամ մը խորհրդարանին մէջը ճառ խօսելով հոռմայեցի տիկնոջ մը վրայ՝ որուն դուստրը ձիավարութեան վարժապետի մը հարս կ'ուզէին առնել, ուրիշ խօսքերուն մէջ աս ալ ըսաւ. Ո՛վ հարք համագրեալք, զգուշացէք անանկ բան հրամսելու՝ որ ետքը չի զղջաք հրամայեցնուդ վրայ. վասն զի դէշ ամուսնութիւնը հողի կոշտ մը նետելու կը նմանի. որուն որ կը հանդիպի՝ կը վիրաւորէ, քովինները փոշիով կը կուրացնէ, ինքն ալ կը փշրի կ'երթայ: Իրաւցընէ աղւոր խօսքեր էին ըսածները, ու մեծ վճիռ էր տուածը. վասն զի դէշ փեսայն մահ է հարսին, անուն կոտորութիւն անոր ազգականներուն, ետքը իրեն ալ թշուառութիւն: Աս ամեն ըսածներէս կրնաք իմանալ ինչու այսչափ դժուարութիւն ընելս Մարտինային հարսնութեանը:

Մարկոս Աւրելիոսին աս ճառը խիստ հաճոյ եղաւ ծերակուտին, տղուն ազգականները լռեցին՝ բերաննին խօսք չի մնաց. փաւտինա կայսրուհին ալ, որ ինքն էր աս բանիս տակէն դրդողը, ամթով մնաց: Բայց աս ճառին պտուղը ինչ ըլլալը, այսինքն հարսնիքը արգելուեցաւ թէ չէ, պատմիչները չեն պատմեր: